# Պարույր Սևակ

## հեքիաթը

Իմ լուսեղենի՛կ, իմ աննմա՛ն,
Իմ ապագա՛, գալի՞ք...
Ի՞նչ ես անում արդյոք հիմա,
Իմ հեռավո՛ր բալիկ:
Բարձիդ տա՞կ ես թեղ կոխում
Ու խորամանկ ժպտում,
Թե՞ վեր կենում ու կիսամերկ
Մահճակալում պտտում:
Թե՞ մայրիկիդ հյուսքը բռնած
Քրքրջում ես անմեղ,
Թե՞ «կարդում ես» քո չըմբռնած
Գրքույկները գունեղ:
Թե՞ երգում ես, արտասանում
«Բանակային եմ քաջ»...
Բանակային ե՛ս եմ, բալիկ,
Մա՛յրդ, պա՛պըդ անգամ:
Բանակայի՛ն, որ մոտ չգա
Ոչ մի գայլ ու գազան,
Ոչ թե, բալիկ, քո իմացած
Հեքիաթներից դաժան,
Ո՛չ աշխարհից քո իմացած

Սև ու Ճերմակ դևի:
Կա մի ուրի՛շ դև ու աշխարհ՝
Ամբողջովին դեղի՜ն:
Դու չգիտես դեղին դևին՝
Գայլի ախորժակով:
Ապրում է նա մեզնից հեռու,
Օվկիանոսից այն կողմ...
Քեզ այդ մասին կպատմեմ ես
Հետո՛, հիմա քնի՛ր:
Այնժամ գուցե դա իսկապես
Հեքիաթի պես լինի...

29.II.1952թ.
Մոսկվա